



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

19 մայիսի 2020 թվականի թիվ 38-Ա

ք. Երևան

#### «ՅՈՐՆԵԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2020 թվականի մարտի 10-ին հարուցված թիվ 4 վարչական վարույթի նյութերը՝ *սյարզեց*:

2020 թվականի մարտի 10-ին Հանձնաժողով մուտքագրված «ՅՈՒՔՈՍ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Իրավատեր) դիմումում նշված է հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող «ՅՈՐՆԵԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից խախտում կատարելու փաստի վերաբերյալ:

Ըստ Իրավատիրոջ՝ Ընկերության կողմից առանց պայմանագրային հիմունքների վերահեռարձակվում են TNT4 International (ТНТ4 Интернэшнл), TNT Comedy (ТНТ Комеди), Friday International (ПЯТНИЦА Интернэшнл), TV-3 International (ТВ-3 Интернэшнл) հեռուստաալիքները:

Վերոնշյալ հեռուստաալիքների մալուխային հեռարձակման և ենթալիցենզային պայմանագրեր կնքելու բացառիկ իրավունքը Հայաստանի Հանրապետությունում վերապահված է Իրավատիրոջը:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Իրավատիրոջ 2020 թվականի մարտի 10-ի դիմումը՝ 2020 թվականի մարտի 10-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը 2020 թվականի մարտի 10-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Ընկերությանը և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները և իրավական հիմքերը:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հատարարելու մասին» Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշումը, հաշվի առնելով, որ Պարետի ցուցումով կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության համապատասխան համայնքի վարչական սահման մուտք գործելու և վարչական սահմաններից ելք կատարելու հատուկ ռեժիմ և ղեկավարվելով «Արտակարգ

դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 8-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով, Հանձնաժողովը 2020 թվականի մարտի 20-ին թիվ 21-Ս որոշմամբ՝ մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը կասեցրել է Ընկերության նկատմամբ 2020 թվականի մարտի 10-ին հարուցված թիվ 4 վարչական վարույթը, որի մասին Ընկերությանը տեղեկացվել է:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրությունում Ընկերությունը հայտնել է, որ TNT4 International, TNT Comedy, Friday International, TV-3 International հեռուստաալիքները Ընկերության կողմից չեն վերահեռարձակվում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 45.1-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2020 թվականի մայիսի 12-ի թիվ 13-Ս հրամանը՝ իրականացրել է մշտադիտարկում հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող Ընկերությունում, որի արդյունքում արձանագրվել է, որ Ընկերության կողմից չեն վերահեռարձակվում TNT4 International (ТНТ4 Интернэшнл), TNT Comedy (ТНТ Комеди), Friday International (ПЯТНИЦА Интернэшнл), TV-3 International (ТВ-3 Интернэшнл) հեռուստաալիքները:

***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են մշտադիտարկման՝ Ընկերությունում ուղղակի դիտարկման արդյունքներին և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի խախտում չի հայտնաբերվել:

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով Ընկերության նկատմամբ հարուցված թիվ 4 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված հեռուստառադիոընկերություններն օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների ձրագրերը կարող են վերահեռարձակել պայմանագրային հիմունքներով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով հեռուստառադիոհեռարձակում իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող ընկերությունների հեռուստառադիոձրագրերը հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահեռարձակվել միայն Հանձնաժողովի թույլտվության հիման վրա:

Թույլտվությունը տրվում է, կամ դիմումը մերժվում է վերահեռարձակում իրականացնելու համար Հանձնաժողովին դիմելուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 52-րդ հոդվածի 1-ին մասի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Կարճել «ՅՈՐՆԵԹ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 4 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

19 մայիսի 2020թ.

ք. Երևան